«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

"MATENADARAN"
MESROP MASHTOTS
INSTITUTE OFANCIENT
MANUSCRIPTS

Երևան, Մաշտոցի պող. 53, ☏51-30-00

Yerevan, Mashtots Av. 53, ☏51-30-00

0-713
02.09.2022

«ԱԼԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ Ս. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Զաքարյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար «Տանիքների վերանորոգման աշխատանքներ՝ Մատենադարանի նոր մասնաշենքի տանիքի մասնակի նորոգման աշխատանքներ» -ի ձեռքբերման համար հայտարարված «ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-01/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից՝ «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ և «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» հիմնադրամի միջև 04.05.2022թ. կնքվել է թիվ ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-01/22 գնման պայմանագիրը:

Վերոհիշյալ պայմանագրով սահմանված՝ պայմանագրի կատարման վերջնաժամկետն էր՝ 31.08.2022թ.: Պայմանագրի ժամկետի ավարտի դրությամբ, կարող ենք փաստել, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունները Կապալառուն չի կատարել և պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացված չեն:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ սույնով «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» հիմնադրամը ծանուցում է Ձեզ, որ միակողմանի լուծում է 04.05.2022թ-ին կնքված թիվ ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-01/22 պայմանագիրը:

Առաջարկում ենք Ձեզ, մինչև պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը

Պատվիրատուին վճարել ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-01/22 ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Հակառակ դեպքում, առաջնորդվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, Պատվիրատուն «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իր պատճառաբանված որոշումը կներկայացնի Լիազորված մարմին.

ՏՆՕՐԵՆ Վ. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ